ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈԴԵՐԱՑԻԱՅԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

www.allrights.am

Այս քաղաքականությունը մշակվել է
Բոլորը հանուն հավասար իրավունքների հիմնադրամի կողմից։

www.mdi.am

Այս քաղաքականության մշակմանն աջակցել է
Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտը

www.mediaethics.am

Այս քաղաքականության մշակմանն աջակցել է
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը

www.moderaitor.app

Այս քաղաքականության իրականացմանը նպաստում է
moderAItor գործիքը

Սույն քաղաքականությունը մշակվել է Միացյալ Թագավորության միջազգային զարգացման աջակցության շրջանակներում՝ ՄԹ կառավարության ֆինանսավորմամբ իրականացվող «Ուժեղացնելով Արևելյան հարևանության դիմակայունությունը» ծրագրի ներքո, որը համակարգում է Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտը (IWPR) և իրականացվում է «Բոլորը հանուն հավասար իրավունքների» հիմնադրամի և «Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ» ՀԿ-ի կողմից։ Փաստաթղթում արտահայտված տեսակետները/բովանդակությունը, պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտացոլեն IWPR-ի կամ Միացյալ Թագավորության կառավարության (ՄԹ) պաշտոնական տեսակետները։

Ներածություն

Ժամանակակից մեդիայի և հաղորդակցության արագ զարգացման պայմաններում, հատկապես սոցիալական հարթակներում, հանրային քննարկումները հաճախ հատում են էթիկական և իրավական սահմանները: Մեդիան, որն առցանց հանրային խոսույթների հարթակ է, պետք է ունենա մոդերացիոն քաղաքականություն, որը ոչ միայն էթիկական պարտավորություն է, այլև հասարակական վստահության և թվային անվտանգության ապահովման կարևոր նախապայման:

Մեդիայի հրապարակած բովանդակության ներքո եղած մեկնաբանությունների բաժինը դիտարկվում է հանրային, բայց վերահսկելի տարածք, որտեղ օգտատերերը, անկախ իրենց ինքնությունից կամ կարգավիճակից, պետք է արտահայտվելու հնարավորություն ունենան՝ պաշտպանված լինելով ատելության խոսքից և խտրականության դրսևորումներից:

Իրավական և էթիկական համապատասխանություն

Սույն Քաղաքականությունը մշակվել է՝ հաշվի առնելով տեղական և միջազգային իրավական նորմերը.

- ՀՀ քրեական օրենսգիրք - հոդված 329, 330, ինչպես նաև ատելության շարժառիթով այլ հանցագործությունների հանցակազմերը,
- «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք - օրինականության, համաչափության, հավաստիության տվյալների սուբյեկտի համաձայնության և սուբյեկտների նվազագույն ներգրավման սկզբունքներ, տվյալների մշակման կոնկրետ, չափավոր և հիմնավորված նպատակներ,
- Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր - 3. Խմբագրական քաղաքանության 3.4.6. և 3.4.7. դրույթներ,
- ԵՄ թվային ծառայությունների ակտ - մոդերացիոն որոշումների թափանցիկություն (հիմնավորված ծանուցումներ), բողոքարկման դյուրին և հասանելի մեխանիզմներ, թափանցիկության պարբերաբար հաշվետվություններ (Transparency Reports):

Սույն Քաղաքականության դրույթները moderAItor ավտոմատացված և արհեստական բանականությամբ օժտված գործիքի մեթոդաբանության հիմքն են:

Քաղաքականության նպատակները

- Ապահովել առցանց անվտանգ միջավայր, որտեղ օգտատերերը, հատկապես խոցելի խմբերը պաշտպանված են ատելության խոսքից, ոտնձգություններից և խտրականությունից:
- Խթանել առողջ, քաղաքակիրթ և բազմակարծիք հանրային խոսքը՝ օրինական, թեկուզև կոպիտ կամ քննադատական արտահայտությունը հստակ սահմանազատելով ապօրինի կամ հրահրող բովանդակությունից:

- Հիմնել խմբագրման գործիքներ (նաև՝ moderAItor), որը լիովին համապատասխանում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրին։
- Մոդերացիոն գործողությունները դարձնել թափանցիկ և ստեղծել հաշվետվողականության մեխանիզմներ, որպեսզի օգտատերերի համար պարզ լինեն որոշումների կայացման սկզբունքները։

Համատեքստ

Այս քաղաքականության մշակումը պայմանավորված է հայաստանյան թվային տիրույթում ատելության խոսքի աճով, որը հաճախ թիրախավորում է հանրային դեմքերին, լրագրողներին և քաղաքական ու քաղաքացիական գործունեություն ծավալող դերակատարներին։ Համատեքստի մանրամասները ներկայացված են Բոլորը հանուն հավասար իրավունքների հիմնադրամի «Կանանց թիրախավորող առցանց ատելության խոսքը Հայաստանում» հետազոտությունում։

Գործողության շրջանակը և կիրառելիությունը

Այս բաժինը հստակեցնում է սույն Խմբագրական քաղաքականության գործողությունների և կիրառելիության շրջանակը՝ ապահովելով դրա համապարփակ բնույթը և հետևողական օգտագործումը համապատասխան հարթակներում։

Սույն Քաղաքականությունը տարածվում է բոլոր մեկնաբանությունների վրա, որոնք սոցիալական մեդիա հարթակներում (օրինակ՝ Facebook, YouTube, X/Twitter, Instagram և այլն) տեղադրվում են մեդիայի հրապարակած որևէ բովանդակության ներքո (հոդվածներ, տեսանյութեր, լուսանկարներ կամ հաղորդագրություններ)։

Մոդերացիոն քաղաքականությունը կիրառելի է բոլոր մեկնաբանությունների (հայերեն՝ հայատառ, լատինատառ, կյուրեղատառ, անգլերեն և ռուսերեն) համար՝ անկախ դրանց լեզվից, գրելաձևից կամ կոդավորումից։

Քաղաքականություններ

1. Բովանդակության մոդերացիա

Նպատակը - Լսարանի համար ապահովել անվտանգ և հարգալից առցանց միջավայր՝ արդյունավետորեն կառավարելով օգտատերերի մեկնաբանությունները՝ նույնականացնելով ատելության խոսքը և խտրականության շարժառիթով վիրավորական բովանդակությունը։

Ընդգրկումը - Սույն քաղաքականությունը կիրառելի է մեդիայի վերահսկողության տակ գտնվող բոլոր հարթակների համար և իրականացվում է մոդերացիայի թիմի ու moderAItor գործիքի միջոցով։

1.1 Մեդիա հարթակներում խստիվ արգելվում է տարածել ատելության խոսք: Այս քաղաքականությունը (նաև՝ moderAItor գործիքը) սահմանում է, որ հետևյալ կատեգորիաներին (սահմանումները ներկայացված են փաստաթղթի վերջում) պատկանող մեկնաբանությունները ենթակա են հեռացման կամ այլ մոդերացիոն գործողությունների.

- Վիրավորանք կամ նվաստացում (ատելության, խտրականության շարժառիթով)
- Ապամարդկայնացում (դեհումանիզացիա)
- Սպառնալիք, բռնության կոչ, ինքնասպանության, ցեղասպանության, ահաբեկչության հրահրում
- Կարծրատիպավորում (ատելության, խտրականության շարժառիթով)
- Հետապնդում (բուլինգ)
- Ատելության հրահրում և/կամ հիմնավորում/արդարացում, իրավունքների ժխտում
- Բռնության կամ խտրականության արդարացում
- Անջատում, օտարում, բացառում
- Պիտակավորում (ատելության, խտրականության շարժառիթով)
- Թաքնված (կոդավորված) ատելության խոսք
- Ապատեղեկատվություն, դավադրապաշտական տեսություն, վախի տարածում (եթե ուղեկցվում է ատելության խոսքով, խտրականության դրսևորումներով):

1.2 Մեդիա կազմակերպությունը պետք է ստանձնի այս քաղաքականությամբ սահմանված բովանդակության մոդերացիայի գործողությունները (սահմանափակում, հեռացում, արգելափակում), որոնք թույլատրվում են միմիայն 1.1. դրույթի և/կամ ՀՀ օրենսդրության պահանջների, Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի խախտումների դեպքում:
1.3 Մեդիան կարող է օգտատերերի մեկնաբանություններին արձագանքել իր մեկնաբանությամբ, որը չի կարող հակասել այս քաղաքականության 1.1. դրույթին և պետք է ուղղված լինի հավանական կոնֆլիկտը կամ ատելության հրահրումը կանխարգելելուն:
1.4 Ատելության խոսքի նկատմամբ կիրառվող միջոցը պետք է լինի խախտման ծանրությանը, հանրային վտանգավորությանը համարժեք.

- նվազ վնասակար մեկնաբանությունների դեպքում մոդերատորն իրավունք ունի **փակել** (hide) բովանդակությունն առանց օգտատիրոջը ծանուցելու,
- խիստ վնասակար մեկնաբանությունների դեպքում մոդերատորն իրավունք ունի անմիջապես **ջնջել** (delete) բովանդակությունը և պետք է օգտատիրոջը ծանուցի (բացառությամբ ուղիղ հեռարձակումների) օգտատերերի համայնքի կանոնները խախտելու մասին,
- միևնույն օգտատիրոջ պարբերաբար հրապարակած նվազ կամ խիստ վնասակար մեկնաբանությունների պարագայում մոդերատորը պետք է նրան ծանուցի օգտատերերի համայնքի կանոնները խախտելու և մոդերացիայի կանոնների համաձայն նրան **արգելափակելու** (ban) մասին:

1.5 Կեղծ օգտահաշիվների կամ համակարգված կեղծ օգտահաշիվների խմբերի միջոցով տարածվող ատելության խոսքի դեպքում, անկախ մեկնաբանության առավել կամ նվազ ծանր լինելու հանգամանքից, մոդերացիոն թիմը և մեդիայի խմբագրությունը կարող են ինքնուրույն որոշել, թե 1.4 կետի ո՛ր մոտեցումը կիրառել՝ առաջնորդվելով օգտատերերի համայնքի արդյունավետ և պատասխանատու կառավարման սկզբունքներով:
1.6 Մոդերատորները պետք է ակտիվորեն կառավարեն և թարմացնեն անցանկալի բառացանկը (stop-list)՝ հարմարեցնելով ընթացիկ սպառնալիքներին, խոսակցական լեզվի փոխակերպումներին:

2. Օգտատերերի տեղեկացում
Նպատակը - Նպաստել օգտատերերի տեղեկացմանը հարթակի կանոններին և նրանց իրավունքների իրացմանը, խթանել պատասխանատու և օրինապահ վարքագիծ:

Ընդգրկումը - Տեղեկության հասանելիության ապահովումը մեդիայի խմբագրության պարտականությունն է, անհատական ծանուցումները՝ մոդերացիայի թիմի:

2.1 Հարթակում մոդերացիայի կանոնները պետք է հասանելի և տեսանելի լինեն, ներկայացվեն հստակ, ընկալելի լեզվով:
2.2 Յուրաքանչյուր գրառման ներքո մեդիան պետք է հիշեցնի մեկնաբանություններ թողնելու կանոնների և մոդերացիայի քաղաքականության մասին:
2.2 Մեկնաբանության հեռացման դեպքում, տեխնիկական հնարավորության սահմաններում, օգտատերը պետք է ստանա հիմնավորված ծանուցում՝ խախտման կոնկրետ կետի նշումով:
2.3 Անհրաժեշտ է պարբերաբար տեղադրել ուղեցույցներ և հիշեցումներ՝ օգտատերերին հասկանալի ձևով ներկայացնելով, թե հարթակում ինչն է թույլատրվում և ինչը՝ արգելվում:
2.4 Քաղաքականության մեջ կատարվող էական փոփոխության դեպքում օգտատերերը պետք է նախապես տեղեկացվեն հրապարակային հայտարարության միջոցով: Այս քաղաքականությունը պետք է հրապարակված (կամ ԴՄ կայքից հղումով) լինի մեդիայի կայքում, որն օգտատիրոջ տեղեկացման գլխավոր ցուցիչներից է:

3. Առցանց համայնքի կառավարում
Նպատակը - Խրախուսել ինքնակարգավորվող և առողջ հանրային խոսքը՝ նվազագույնի հասցնելով մոդերատորի անմիջական միջամտությունը:

Ընդգրկումը - Գործընթացն ամբողջապես կառավարում է մոդերացիայի թիմը:

3.1 Օգտատերերն ազատ են առանց մոդերատորների միջամտության արտահայտել իրենց կարծիքը, դիրքորոշումն ու արձագանքը, եթե դրանք չունեն 1.1 կետի հատկանիշները:
3.2 Օգտատերերին պետք է տրամադրվեն արդյունավետ գործիքներ (հետադարձ կապ Google Form կամ այլ)՝ անցանկալի բովանդակության մասինահազանգելու համար, որին մոդերացիոն թիմը պետք է արձագանքի առավելագույնը 72 ժամում:

3.3 Մոդերացիայի որակի մշտական բարելավման համար անհրաժեշտ է պարբերաբար հարցումներ կազմակերպել՝ համայնքի կարծիքը պարզելու նպատակով։

4. Մոդերացիոն որոշումների կայացում

Նպատակը - Ստեղծել որոշումներ կայացնելու հստակ ընթացակարգեր, ապահովել արագություն, բարձր ճշգրտություն և մարդկային վերահսկողություն՝ ավտոմատացված գործիքների առավելությունները խելամիտ կերպով համատեղելով մարդկային դատողության և փորձի հետ։

Ընդգրկումը - Աշխատանքային հստակ ընթացակարգերը մոդերատորների, իրավաբանի և moderAItor գործիքի համար են։

4.1 Յուրաքանչյուր որոշում պետք է հիմնված լինի բովանդակության համատեքստի, հեղինակի մտադրության և հնարավոր վնասի գնահատման վրա (Rabat Action Plan-ի սկզբունքներ)։
4.2 Մոդերատորը և/կամ իրավաբանը պարտադիր պետք է վերանայեն վիճահարույց մեկնաբանությունները։
4.3 Մոդերացիոն բոլոր որոշումները ենթակա են փաստաթղթավորման՝ հետագա աուդիտի և վերլուծության հնարավորությունը ապահովելու համար։
4.4 Կեղծ օգտահաշիվների կամ համակարգված կեղծ օգտահաշիվների խմբերի տարածած ատելության խոսքի դեպքում մոդերացիոն որոշումը կարող է լինել միանգամայն տեղին և կտրուկ՝ հաշիվների արգելափակմամբ, առանց համապատասխան ծանուցման։

5. Մոդերատորի վարքագիծ

Նպատակը - Մշակել և սահմանել վարքագծի ու մասնագիտական էթիկայի չափանիշներ, որոնք կերաշխավորեն մոդերացիայի անաչառությունը, հանրության վստահությունը և շահերի բախումների բացառումը։

Ընդգրկումը - Վարքագծի այս կանոնները պարտադիր են մոդերացիայի իրավասություն ունեցող բոլոր անձանց համար։ Բողոքների դեպքում էթիկական նորմերի պահպանման վերահսկողությունն իրականացնում է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը։

5.1 Մոդերատորների որոշումները պետք է լինեն օբյեկտիվ՝ սեփական քաղաքական, սոցիալական, կրոնական կամ այլ անձնական կամ խմբային շահերից բխող հայացքներից զերծ։
5.2 Մոդերատորներին արգելվում է հրապարակայնորեն բանավիճել օգտատերերի հետ և/կամ պաշտոնական էջից ուղարկել հեգնանք, ագրեսիա պարունակող հաղորդագրություն։
5.3 Մոդերատորները պարտավոր են խստորեն պահպանել գաղտնիությունը՝ չհրապարակելով (այդպիսով՝ նաև չթիրախավորելով) օգտատերերի անձնական տվյալները, ներքին խմբագրական քննարկումները չհայտնել երրորդ կողմին։

5.4 Մոդերատորներին արգելվում է իրենց լիազորություններն օգտագործել անձնական վրեժխնդրության կամ դիրքի չարաշահման նպատակով:
5.5 Մոդերատորները պետք է ցուցաբերեն հետևողականություն՝ նույն կանոնները կիրառելով բոլորի նկատմամբ հավասարապես՝ անկախ օգտատիրոջ կարգավիճակից կամ որևէ առանձնահատկությունից:
5.6 Շահերի բախման դեպքում (օրինակ՝ մոդերատորի հետ առնչություն ունեցող անձի մեկնաբանություն) մոդերատորը պետք է ինքնաբացարկ հայտնի և դեպքը փոխանցի գործընկերոջը կամ կիրառի երկրորդ կարծիքի մոտեցումը՝ մոդերացիոն որոշումը քննարկելով խմբագրակազմի ներկայացուցիչներից որևէ մեկի հետ:
5.7 Մոդերատորները պարտավոր են հետևել էթիկայի կանոններին և խուսափել գրաքննության կիրառումից:
5.8 Էթիկական կանոնների խախտման կամ արտաքին ճնշումների դեպքում մոդերատորները պարտավոր են այդ մասին շտապ տեղեկացնել խմբագրակազմին:
5.9 Մոդերատորները պետք է մասնակցեն վերապատրաստումների, թարմացնեն ատելության խոսքի նոր դրսևորումների, օրենսդրական փոփոխությունների և moderAItor գործիքի նոր գործառույթների վերաբերյալ գիտելիքները: Այս դասընթացները մշակվում և իրականացվում են ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետ սերտ համագործակցությամբ՝ ապահովելով միջազգային էթիկական չափանիշների և մեթոդների կիրառումը:

6. Բողոքներ և վեճեր

Նպատակը - Ապահովել թափանցիկ և արդյունավետ մեխանիզմ՝ օգտատերերի բողոքները լսելու, մոդերացիոն որոշումները վերանայելու և համայնքի հետ հետադարձ կապը պահպանելու համար:

Ընդգրկումը - Կարգավորում է օգտատերերի և մեդիա կազմակերպության միջև ծագած վեճերը: Գործընթացը կառավարում է մեդիայի խմբագրական թիմը, որը գործում է որպես բողոքները քննող առանձին մարմին՝ վերանայելով մոդերացիայի թիմի որոշումները: Եթե օգտատերը բողոքը ներկայացնում է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին, ապա դեպքի քննությունն իրականացնում է ԴՄ-ն:

6.1 Եթե օգտատերը համաձայն չէ մոդերացիոն թիմի որոշման հետ, կարող է պաշտոնական բողոք ներկայացնել մեդիայի խմբագրությանը կամ ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին (այսուհետև՝ բողոքը դիտարկող կողմ):
6.2 Բողոքը դիտարկող կողմը պարտավոր է ուսումնասիրել ներկայացված բողոքները և, անհրաժեշտության դեպքում, վերանայել կամ չեղարկել նախկինում կիրառված մոդերացիոն գործողությունները կամ հրապարակել ուղեցույցներ, եզրակացություններ, փորձագիտական կարծիքներ:
6.3 Բողոքարկումները ենթակա են քննարկման ողջամիտ ժամկետում, որի արդյունքների մասին դիմողին տրամադրվում է գրավոր պատասխան:

6.4 Սխալ որոշման բացահայտման դեպքում օգտատիրոջ խախտված իրավունքները պետք է վերականգնվեն՝ հնարավոր տեխնիկական միջոցների սահմաններում (օգտատիրոջ արգելահանում, հեռացված բովանդակության վերականգնում, այլ)։

7. Թափանցիկություն և հաշվետվողականություն

Նպատակը - Նպաստել մեդիայի թափանցիկ և հաշվետու մոդերացիոն գործունեությանը և օգտատերերի համայնքի հետ վստահության կառուցմանը:

Ընդգրկումը - Այս քաղաքականությունն ընդգրկում է մոդերացիոն գործընթացների մոնիտորինգը, տվյալների հավաքումը, վերլուծությունն ու հրապարակումը, որի համար պատասխանատու են մոդերատորը և մեդիայի խմբագրակազմը։

7.1 Մոդերացիոն գործընթացը պահանջում է մեկնաբանությունների հոսքի մշտական մոնիտորինգ՝ հատկապես ճգնաժամային իրավիճակներում արագ արձագանքումն ապահովելու նպատակով։
7.2 Մոդերացիոն թիմն ըստ մոնիտորինգի արդյունքների, օրենսդրական փոփոխությունների, տեխնոլոգիական զարգացումների և խոսակցական լեզվի փոխակերպումների պարբերաբար թարմացնում է անցանկալի բառացանկը (stop-list), զգայունության կարգավորումները և սույն Քաղաքականության դրույթները։
7.3 Մեդիան ամեն ամիս վերլուծում է մոդերացիոն գործողությունները և բացահայտում կրկնվող սխալները կամ բացթողումները։
7.4.1 Մեդիան իր վերլուծություններում ներառում է moderAitor ավտոմատացված գործիքից ստացված տվյալները.

- նույնականացված ատելության խոսք պարունակող մեկնաբանությունների քանակ,
- հեռացված, ջնջված մեկնաբանությունների քանակ,
- նույնականացված ատելության խոսքի բնույթի և հիմքերի վիճակագրություն,

7.4.2 Մեդիան իր վերլուծություններում ներառում է մոդերացիոն թիմից ստացված տվյալները.

- ծանուցված և արգելափակված օգտատերերի քանակ,
- Ստացված բողոքների և վեճերի, ինչպես նաև դրանց վերաբերյալ կայացված որոշումների վիճակագրություն։

7.5 Համաձայն սույն Քաղաքականության 7.4.1 և 7.4.2 դրույթների՝ մեդիան կայքում և սոցիալական մեդիա հարթակներում ամեն տարի հրապարակում է վերլուծական տվյալների ամփոփագիրը։

8. moderAItor գործիքի կիրառումը

Նպատակը - moderAItor գործիքի ներդրման միջոցով նպաստել մոդերացիոն գործընթացների դյուրացմանը, ավտոմատացմանը, վիճակագրական տվյալների հավաքմանը և սույն Քաղաքականության դրույթների արդյունավետ կիրառմանը։

Ընդգրկումը - moderAItor գործիքի մատակարարը պատասխանատու է գործիքի անխափան աշխատանքի համար, մոդերացիայի թիմը՝ դրա կիրառման կարգավորումների։

7.1 moderAItor-ը օգնում է նույնականացնել և զտել ատելության խոսք պարունակող բովանդակությունը, սակայն չի փոխարինում մարդու դատողությանը (հատկապես սահմանային դեպքերում)։
7.2 moderAItor գործիքը ատելության խոսքը նույնականացնում է այս Քաղաքականության 1.1 կետում նշված դրույթներով և ատելության խոսքի հիմքերով (սեռ, գենդեր, ազգություն, էթնիկ պատկանելություն, կրոն, հավատք, տարիք, քաղաքական հայացքներ, կուսակցական պատկանելություն, առողջական, սոցիալական, տնտեսական, ընտանեկան կարգավիճակ, արտաքին տեսք և այլն։
7.2 Մոդերատորը իրավասու է սահմանել moderAItor գործիքի զգայունության մակարդակը, որը կարող է լինել բարձր կամ ցածր՝ ըստ 1.1 և 7.1 դրույթների։
7.3 «Ավտոմատ ջնջում» (Auto-delete) գործառույթը պետք է կիրառվի զգուշությամբ, հիմնականում հստակ սահմանված անցանկալի բառերի (stop-list) կամ լիովին համոզված լինելու դեպքերում։
7.4 Մոդերատորը կարող է սահմանել անցանկալի և ատելության խոսք պարունակող, առանձնահատուկ այնպիսի բառացանկ, որը հնարավոր չէ նույնականացնել առանց մարդու միջամտության, բխում է համատեքստից, և որը moderAItor գործիքը կարող է բաց թողնել։
7.5 Մոդերատորը պետք է պարբերաբար համագործակցի moderAItor գործիքի մատակարարի հետ՝ տեղեկացնելով տեխնիկական խնդիրների կամ բարելավման առաջարկների մասին։

Տերմինների բառարան

Ատելության խոսք - Արտահայտվելու բոլոր ձևերը, որոնք տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում են սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, հայացքների, լեզվի, կրոնի, ազգային փոքրամասնությանը պատկանելության, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքի վրա հիմնված ատելությունը, այլատյացությունը, ինչպես նաև անհանդուրժողականության վրա հիմնված ատելության այլ ձևերը, ներառյալ՝ անհանդուրժողականությունն անհատների կամ խմբերի դեմ ագրեսիայի, խտրականության, թշնամանքի, վիրավորանքի ամենատարբեր արտահայտումներով և բռնության կոչերով։

Առցանց ատելության խոսք - Թվային միջավայրում, հիմնականում երկկողմ և բազմակողմ հաղորդակցության հարթակներում, նաև սոցիալական մեդիայում արտահայտվող ատելության խոսք։

Անձնական տվյալներ - Ֆիզիկական անձին վերաբերող տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը:

Մոդերացիա (կանոնակարգում) - Գործընթաց, որի միջոցով վերանայվում է հանրային հարթակներում օգտատերերի տեղադրած բովանդակությունը (մեկնաբանություններ)՝ ապահովելու համար դրա համապատասխանությունը սույն Քաղաքականությանը և գործող օրենսդրությանը:

Մոդերացիոն թիմ / մոդերատոր - Պատասխանատու անձը կամ անձանց խումբը, որը մեդիա կազմակերպությունում իրականացնում է բովանդակության մոդերացիան և սույն Քաղաքականության ապահովումը:

Ապօրինի բովանդակություն - Բովանդակություն, որը ՀՀ օրենսդրության կամ ԵՄ Թվային ծառայությունների ակտի (DSA) համաձայն, համարվում է անօրինական (օրինակ՝ զրպարտություն, ահաբեկչության քարոզ, մանկական պոռնոգրաֆիա):

Կեղծ ինքնություն (ֆեյք) - Առցանց ինքնություն, որը չի պատկանում իրական անձի կամ ներկայացնում է նրան սխալ կամ ոչ ամբողջական տվյալներով (օրինակ՝ ուրիշի անունով, լուսանկարով, կենսագրությամբ)՝ մարդկանց մոլորեցնելու, վստահություն շահելու կամ վնաս պատճառելու նպատակով:

Խոցելի խումբ - Հասարակության առավել զգայուն խմբեր, որոնք խոցելի են (բռնության ենթարկված անձինք, կանայք, տարեցներ և թոշակառուներ, դժվարին պայմաններում հայտնված երեխաներ, կրոնական, ազգային, սեռական փոքրամասնություններ, սոցիալապես խոցելի խմբեր, փախստականներ, տեղահանվածներ և ներգաղթյալներ, հաշմանդամություն ունեցող անձինք և այլն):

Վիրավորանք / Նվաստացում - Խոսք կամ արտահայտություն, որն ատելության, խտրականության շարժառիթով ուղղված է անձի կամ խմբի արժանապատվությունը նվաստացնելուն, որում կա հայհոյանք, կոպիտ կամ վիրավորական ձևակերպում: Խոսք, որն անձին կամ խմբին՝ նույն շարժառիթներով ներկայացնում է որպես ստորադաս, անարժեք կամ հասարակության մեջ ցածր տեղ ունեցող:

Ապամարդկայնացում (դեհումանիզացիա) - Խոսք, որը անձին կամ խմբին զրկում է մարդկային հատկանիշներից՝ համեմատելով կենդանիների, առարկաների, հիվանդությունների կամ «սպառնալիքի» հետ:

Սպառնալիք, բռնության կոչ, ինքնասպանության, ցեղասպանության, ահաբեկչության հրահրում - Խոսք, որը պարունակում է ֆիզիկական վնաս պատճառելու, բռնության, հարձակման կամ վնասման ուղղակի/անուղղակի կոչ կամ սպառնալիք: Խոսք, որը կոչ է անում ամբողջապես կամ մասամբ ոչնչացնել խտրականության արգելքով պաշտպանված բոլոր խմբերին, կամ արդարացնում է այդպիսի գործողությունը:

Կարծրատիպավորում - Խոսք, որն անձի կամ խմբի հատկությունները ատելության, խտրականության շարժառիթով ներկայացնում է չափազանց պարզունակ և հաճախ ընդհանրացված՝ ամբողջ խմբին վերագրելով բացասական կամ սահմանափակող բնութագրեր և ենթադրյալ բացասական հատկանիշներ։

Հետապնդում (բուլինգ)- Խոսք կամ վարք, որը նպատակ ունի կրկնվող նվաստացման միջոցով թիրախավորել անձին կամ խումբը։

Ատելության հրահրում/ հիմնավորում/ արդարացում, իրավունքների ժխտում - Խոսք, որը խթանում կամ նորմալացնում է խտրականությունը, անհանդուրժողականությունը, թշնամանքը ատելությունը որևէ անձի կամ խմբի հանդեպ։ Խոսք, որը կասկածի տակ է դնում կամ մերժում է անձի կամ խմբի հիմնական իրավունքները, ազատությունները կամ հավասարությունը։

Բռնության կամ խտրականության արդարացում - Խոսք, որը բռնությունը, խտրական վերաբերմունքը կամ ճնշումը ներկայացնում է որպես ընդունելի, անհրաժեշտ կամ «արդարացված»։

Անջատում, օտարում, բացառում - Խոսք, որը անձին կամ խմբին ներկայացնում է որպես «ոչ յուրային», վտանգավոր կամ հասարակությունից առանձնացված միավոր։
Խոսք, որը կոչ է անում կամ նորմալացնում է անձի կամ խմբի մարգինալացումը և արտամղումը հասարակական, սոցիալական կամ քաղաքական կյանքից։

Պիտակավորում - Խոսք, որն ատելության, խտրականության շարժառիթով անձին կամ խմբին վերագրում է բացասական, պարզեցված կամ ստիգմատիզացված (նշան, դրոշմ, խարան, վերք) բնորոշում՝ փոխարինելով իրական ինքնությանը։

Թաքնված ատելության խոսք - Խոսք, որը բացահայտորեն անձի արժանապատվությունը արատավորող չէ, բայց օգտագործում է ենթատեքստ, խորհրդանիշներ, կոդային բառեր կամ հղումներ՝ ատելություն փոխանցելու համար։

Ապատեղեկատվություն, դավադրապաշտական տեսություն, վախի տարածում - Կեղծ, խեղաթյուրված կամ մանիպուլյատիվ տեղեկություն, որը տարածվում է մոլորեցնելու, վախ սերմանելու կամ ատելություն, թշնամություն, անհանդուրժողականություն և խտրականություն սերմանելու նպատակով։ Փաստերի պակասության պայմաններում տարածվող վարկած, որը իրադարձությունները ներկայացնում է որպես «գաղտնի ուժերի» կազմակերպված ծրագիր։ Խոսք, որը որևէ խմբից վախի, սպառնալիքի կամ վտանգի զգացում է սերմանում։